ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2023 թվականի N 243-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ, 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Ալեք Սարոյի Պալաքյանին 1/3,Անիչկա Ռուբենի Պալաքյանին 1/6, Ալետա Ենոքի Պալաքյանին 1/6, Աննա Լյովիկի Պալաքյանին 1/6, Ալիկ Լյովիկի Պալաքյանին 1/6 բաժնեմասային սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման սեփականության վկայական՝ 24610022 տրված՝ 21.03.2008-ին) ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, տնամերձ հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարչապետ, 2-րդ փողոց, թիվ 43/1 հողամաս (փոստային դասիչ՝2117) հասցեն: 2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գոյքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. մարտի 15

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2023 թվականի N 244-Ա

ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ ՄԵՍՐՈՊԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան Քաղաքացի Մարզպետունի Մեսրոպի Թովմասյանը հանդիսանալով հողի հարկ, գույքահարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով , իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ , գույքահարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի փետրվարի 16-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի, գույքահարկի և անշարժ գույքի հարկի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.
2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.
Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի , ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից ինչպես նաև իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀԳՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող Տաշիր համայնքի վարչական սահմաններում գտնվող, 06-081-021-002-001 կադաստրային ծածկագրով շինությունը և 7.7312 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերը հանդիսանում են Մարզպետունի Մեսրոպի Թովմասյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով , իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ:

Նշված շինության համար վճարման ենթակա գույքահարկը 2008- 2020 թվականների համար 2023թվականի փետրվարի 02-ի դրությամբ կազմում է 19.544 (տասնինը հազար հինգ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ, որից 13.143 (տասներեք հազար հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 6.401 (վեց հազար չորս հարյուր մեկ) ՀՀ դրամ ՝որպես պարտավորությունները չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

Նշված հողատարածքների համար 2008-2020 թվականի համար 2023 թվականի փետրվարի 02-ի դրությամբ վճարման ենթակա հողի հարկը կազմում է 213.164 (երկու հարյուր տասներեք հազար հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ, որից 75.753 (յոթանասունհինգ հազար յոթ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 137.411 (հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ՝որպես պարտավորությունները չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար 2023 թվականի փետրվարի 02-ի դրությամբ կազմում է 75.534 (յոթանասունհինգ հազար հինգ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որից 68.457 (վաթսուներեք հազար չորս հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.077 (յոթ հազար յոթանասունյոթ) ՀՀ դրամ՝որպես պարտավորությունները չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2023 թվականի փետրվարի 16-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի մարտի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել քաղաքացի Մարզպետունի Մեսրոպի Թովմասյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 01.03.2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի Մարզպետունի Մեսրոպի Թովմասյանի բացակայությամբ):
3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:
Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է,որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն ՀՀ հարկային օրեսգրքի 225-րդ հոդվածի ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:
Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ,ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Քաղաքացի Մարզպետունի Մուշեղի Թովմասյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 308.242 (երեք հարյուր ութ հազար երկու հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի ,գույքահարկի և անշարժ գույքի հարկի վճարման ենթակա գումար. 06-081-021-002-001 կադաստրային ծածկագրով շինության համար 19.544 (տասնինը հազար հինգ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ,որից 13.143 (տասներեք հազար հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 6.401 (վեց հազար չորս հարյուր մեկ) ՀՀ դրամ՝որպես պարտավորությունները չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ, 7.7312 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերի համար 1213.164 (երկու հարյուր տասներեք հազար հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ, որից 75.753 (յոթանասունհինգ հազար յոթ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 137.411 (հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ՝որպես պարտավորությունները չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ,անշարժ գույքերի համար 75.534 (յոթանասունհինգ հազար հինգ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որից 68.457 (վաթսունութ հազար չորս հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.077 (յոթ հազար յոթանասունյոթ) ՀՀ դրամ՝որպես պարտավորությունները չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6.Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081041 հաշվեհամարին, գույքահարկը՝ 900275081025 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275001965 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. մարտի 15

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2023 թվականի N 245-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 69-րդ, 70-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի հանարպետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի 286-Ն որոշումով սահմանված կարգի 5-րդ գլխի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսավող հողամասերի աճուրդների կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. մարտի 15

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2023 թվականի N 246-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-074-0071-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Խորեն Ստեփանի Սիմիկյանի (նույնականացման քարտ՝ 006891063, տրված՝ 08.02.2016թ.) դիմումը (մուտք՝ 14/03/2023-ին, ՔԴ-262-23) հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գյուղական հանձնաժողովի 01.04.1991 թվականի N 2 որոշումից տրված քաղվածքը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ, 60-րդ կետը, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 30-Ն որոշումով, և այն որ օրիանական հատկացված 0.138930 հա հողամասը և կառուցված բնակելի նշանակության շենք շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ շենք շինությունները կառուցվել է մինչև 2001թ. մայիսի 15-ը՝ 1974-1986թթ.-ին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրենքի ուժով ճանաչել Բեթղեհեմ Գևորգի , Խորեն Ստեփանի, Ալիսա Գևորգի, Արմեն Խորենի, Արագած Խորենի, Լուսինե Խորենի Սիմիկյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0071-0001 կադաստրային ծածկագրում գտնվող 0.138930 հա բնակավայրերի բնակելի

կառուցապատման հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:
3. Օրենքի ուժով ճանաչել Բեթղեհեմ Գևորգի, Խորեն Ստեփանի, Ալիսա Գևորգի, Արմեն Խորենի, Արագած Խորենի, Լուսինե Խորենի Սիմիկյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0071-0001 կադաստրային ծածկագրով 0.138930 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:
4. Տնատիրության տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Երևանյան փողոց թիվ 8 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2112)
5.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ բնակելի տան հասցեավորման համար:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. մարտի 16

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2023 թվականի N 247-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԽՈՏՀԱՐՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 15 Հ«այաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-099-0217-0026 ծածկագրով 4,624 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարքը վարձակալությամբ տրամադրել Աշոտ Հմայակի Նազարյանին:
2. Աշոտ Հմայակի Նազարայնի հետ կնքել խոտհարքի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 29730 (քսանինը հազար յոթ հարյուր երեսուն) ՀՀ դրամ վարձավճարով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. մարտի 16

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2023 թվականի N 248-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԽՈՏՀԱՐՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-099-0228-0001 ծածկագրով 0,94 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարքը վարձակալությամբ տրամադրել Աշոտ Հմայակի Նազարյանին :
2. Աշոտ Հմայակի Նազարայնի հետ կնքել խոտհարքի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 6050 (վեց հազար հիսուն) ՀՀ դրամ վարձավճարով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. մարտի 16

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2023 թվականի N 249-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍՎԵՏԻԿ ԱՎԴԱԼՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Սվետիկ Ավդալյան»-ի 2023 թվականի մարտի 16-ի N28 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Տաշիր համայնքի Սարչապետ բնակավայր, 1-ին փողոց, թիվ 72-րդ հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Սվետիկ Ավդալյան»-ի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2023 թվականի առաջին եռամսյակի համար:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. մարտի 16

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2023 թվականի N 250-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. փետրվարի 27-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ Ա/Ձ Նորիկ Հակոբջանյան-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների տուժանքի մասին համաձայնագրերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ա/Ձ Նորիկ Հակոբջանյան-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման N «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/26-1» ծածկագրով պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. մարտի 16

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2023 թվականի N 251-Ա

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԿԱԶԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստան Հայկազի Շահբազյանի դիմումը(մուտք՝ 27.02.2023-ի թիվ ՔԴ-200-23) «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցամատյան 431), հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գյուղական հանձնաժողովի 21.03.1991-ի թիվ 2 որոշման քաղվածքը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 25-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 30-Ն որոշումը, և այն, որ շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել Հայաստան Հայկազի Շահբազյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Միխայլովկա, 3-րդ փողոց, թիվ 45 (կադաստրային ծածկագիր՝ 06-077-0035-0015) հասցեում գտնվող 0,194116 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:
2.Հողամասի սահմանները որոշվում են «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Միխայլովկա, 3-րդ փողոց, թիվ 45 (փոստային դասիչ՝ 2113) հասցեն: 4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անասնաշենքի հասցեավորման համար:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. մարտի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2023 թվականի N 252-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Գառնիկ Գրիգորի Մկրտչյանին,Զենֆիրա Ներսեսի Մկրտչյանին, Վասիլ Գրիգորի Մկրտչյանին,Վահրամ Գրգորի Մկրտչյանին,Նուշիկ Ռոբերտի Մկրտչյանին,Նունե Վասիլի Մկրտչյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման սեփականության վկայական՝ 1776469 տրված՝ 07.12.2005-ին) ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր, Լենինի փողոց, թաղամաս 8, բնակելի տուն թիվ 4 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Վ.Սարգսյան փողոց, 4-րդ փակուղի, թիվ 4 բնակելի տուն (փոստային դասիչ՝2101) հասցեն: 2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ բնակելի տան վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. մարտի 17

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2023 թվականի N 253-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Վարդգես Լյուդվիգի Քաչակուլյանին, Սուսաննա Ալեքսանի Քաչակուլյանին, Գևորգ Վարդգեսի Քաչակուլյանին, Գոհար Վրդգեսի Քաչակուլյանին, Ջուլիետա Մարտունի Սուքիասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման սեփականության վկայական՝ 953960 տրված՝ 16.09.2002-ին) ՀՀ Լոռու մարզ, Մեծավան համայնք, բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Գայի փողոց, թիվ 35/2 բնակելի տուն (փոստային դասիչ՝2112) հասցեն:
2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ բնակելի տան վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. մարտի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2023 թվականի N 254-Ա

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՄԻԽԱՅԼՈՎԿԱ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստան Հայկազի Շահբազյանի դիմումը, (մուտք 27.02.2023-ի ՔԴ-200-23) դիմումը , «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ըստ օրենքի Ժառանգության իրավունքի վկայագիրը(գրանցամատյան 431), հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գյուղական հանձնաժողովի 21.03.1991-ի թիվ 2 որոշման քաղվածքը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի1 52-րդ հոդվածի 4-րդ մասով, 59-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N 867 որոշումով հաստատված կարգի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստան Հայկազի Շահբազյանի անվամբ որպես սեփականություն վերականգնել Տաշիր համայնքի, Միխայլովկա գյուղի վարչական սահմաններում գտնվող հետևյալ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի հողհատկացման հիմքերը՝
1)1,286870 հա մակերեսով վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 06-077-0114-0022),
2)1,009229 հա վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 06-077-0126-0023),
3)1,572107 հա մակերեսով վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 06-077-0156-0035):
2.Հողամասերի սահմանային չափերը որոշվում են «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագերով:
3.Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայասատնի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. մարտի 17
ք.Տաշիր